

օդակն, — կարելի է միայն այն աղատ ազդեցութիւնների բարեխիղճ ուսումնասիրութեամբ, որոնց միջոցով կրթւում է ժողովուրդը, կարելի է միայն հարցը բազմակազմանի քննութեան ենթարկելով, նոցա վրայ կատարած մի շարք փորձերով ու նոցա մասին տուած հաշիւներով:

Ա. Ն. Տալեսոյ.

## ԿԱԲԵԳԻ

Կարագ պատրասելու այեւայլ պատկանելիքներ. Կարագը քամելուց յետոյ որոշ ձև տալու համար աւելի լաւ է կաղապարների մէջ գնել, որոնք լինում են երկու տեսակ՝ միջ քանակութեամբ կարագի համար պէտք է լինի քառանիստ, իսկ փոքրիկ կարոների համար կոլոր, երկարաւուն և այլ տեսակի կաղապարներ: Այդ ըոլոր կաղապարները կարելի է շնորհ փայտից այլ և այլ մեծութեամբ և փոքրագութեամբ. յարմար են ճանաչուած սպիտակ ցարասու (թխտենու—ծերեզա), արմաւենու, լորենու, փեկոնու (հաճարի-ծյուկօթիա) փայտերից պատրաստածները: Ամենից լաւը արմաւենու պատրաստած կաղապարներն են, որոնց մի գրուանքանոցն արժէ 2 ռ. 50 կ.,  $\frac{1}{2}$  գրուանքանոցը՝ 2 ռ. 25 կոպ.,  $\frac{1}{4}$  գրուանքանոցը՝ 2 ռ. եայն: Սպիտակ ցարասուց և միենոյն մեծութեամբ պատրաստած կաղապարների հասարակ տեսակն արժէ 35—65 կոպ:

Քառանիսիւնաձե կաղապարները, որոնք բաղկացած են չորս տախտակներից, բաւական տժան են.

5 զրդ. կարագ տանող կաղապարն արժէ  $\frac{75}{2}$  կոպ.

10 զ. > \* \* \* ,  $\frac{85}{2}$  \*

20 զ. > \* \* » 1 ռուբ. >

Կաթնատնտեսութեամբ պարապող ամէն մի մարդ, ամէն մի գիւղացի կարող է տանը եւը միջոցներով պատրաստել կաղապարներ տռանց դժուարութեան և աղատուել աւելուդ ծախըեր անելուց:

Կարագի ճմիխ գործիք կամ մամուլ. Ոքան լաւ և պինդ կերպով տեղաւորուած լինի կարագը, այնքան աւելի լաւ կարող է մնալ, պահել եւը ձեւ և աւելի լաւ գին կունենայ:

շուկայում: Ահա այս նպատակով կարագին որոշ ձեւ առաջաց յետոյ հարկաւոր է նաև ճնշել, սեղմել, որի համար կարագով կազապարը պէտք է զնել սովորական պատահակաւոր ճնշաբանի, ճմլիչի տակ, սեղմել, և այդ դրութեամբ թողնել մի քանի ըոսէ: Այդպիսի մի ճնշաբանն արժէ 10 ռուբլի:

Փոքրիկ թիակներ կարագի համար. Կարագի վերաբերեալ ըուլոր աշխատաւթիւնները՝ խնոցուց գուրս բերելուց մինչեւ ձեւ տալը, ճմլող գործիքի տակ դնելը պէտք է կատարել փայտեայ փոքրիկ թիակներով. ոչ մի գէպքում չպէտք է ձեռքերով գործ ունենալ կարագի հետ: Թիակները պատրաստում են տարբեր ձեռքով և մեծութեամբ, նայած աշխատաւորի սովորութեան և թէ ինչ տեսակ գործ պէտք է կատարել նրանցով: Եռանկիւնի թիակներն իրենց ձեռվ տւելի յարմար են ճանաչուած խնոցումիջից կարագը գուրս հանելու և քամիչի վերայ աշխատելու ժամանակ. այդպիսի թիակի սուր ծայրով շատ հեշտութեամբ կարելի է կարագի միջից գուրս հանել պատահարար ընկած աղտեղութիւնը: Քառանկիւնածեն, հարթ և մանաւանդ երկարութեամբ ակոսաւոր փոսիկներ ունեցող թիակներն աւելի յարմար են կարագի փոքրիկ կտորներն ի մի հաւաքելու և ձեւ տալու ժամանակ: Թիակները շինում են արմաւենու, կազնու, սպիտակ հանարի (օնկայ բյու), նմանապէս և ցարտոսի փայտից: Այդպիսի թիակները շատ աժան են՝ 25—50 կուլ.

Կարագի Տեսակները. Աղած կարագը սովորաբար պէտք է տեղաւորել երեք փթանոց փոքրիկ տակառների մէջ: Տակառների միահաւասար մեծութիւնը խիստ կարելոր է, բայց աւելի կարելոր է, որ տակառները լու շինուած լինեն և որքան մասերը պինդ և հարթ կերպով երար գրկած, միացած լինեն, այնքան աւելի նրանց մէջ լաւ կպահուի կարագը: Սովորաբար գործ են ածւում լաստենու (օլխօնակ), ցարտոսու և լորենու փայտից շինուած տակառներ<sup>1</sup>:

Կարագին գոյն տալու նիւրկ. Կարագին գոյն տալու համար գործ է ածւում գործարաններում պատրաստած առանձին տեսակի ներկի ջաֆրանով, զաղարի հիւթով և կամ որեւ է այլ բանով երեկը չպէտք է ներկել կարագը: Կարագին գոյն տալու համար յատկապէս պատրաստած ներկը կոչւում է հրուկ (օր-

<sup>1</sup> Մեզանում դիւղերից կարագը իւղը ժաղաց են թիւռում: Ճախելու հուղամեռալ, որ որոշ լափակ յարմար կարելի և ճանաչել:

լեանի): Ներկում են ոչ թէ կարագը, այլ այն կաթը և սերը, որ լցնում են խոնցու մէջ կարագ պատրաստելու համար:

Ներկի քանակը, նայած տարուայ եղանակին, ըստ այնմ էլ որոշում են. այնքան պէտք է խառնել, որ կարագը յարդագոյն դեղին լինի: Որովհետեւ գարնանը և ամբանը անսասունները կանոց խոտ են ուտում և նրանց կաթից պատրաստած կարագը յարդագոյն դեղին է լինում, այդ պատճառով կամ կարեք չի լինում ներկել և կամ, հակառակ դէպըում, հարկաւոր է լինում շատ քիչ ներկ խառնելու զմեռը որովհետեւ անսասունները չոր խոտ են ուտում, կարագը լինում է սպիտակ: ահա այսպիսի կարագի հետ անհրաժեշտ է խառնել բաւականացափ ներկ: Գանձմարքայում 25 լիտր սերի հետ խառնում են 5 գրամ հրուկ: Թէպէտ կարագի գոյնն իր յատկութեան վերայ ոչ մի ազդեցութիւն չի ունենում, բայց որովհետեւ սպիտակագոյն կարագը յարգի չէ և պակաս արժէքաւոր, զորա համար էլ ներկում են: Հրուկ կոչուած այս նոր ներկը ըոլորտին անվնաս է: Ծախում է գլխաւորապէս արտասահմանում պատրաստածները, մանաւանդ տարածուած է Meyer & Henckel շշերով 1/4 գրվանքանոց, որոնց համը մի ռուբլի է: Ռուսաստանում Վ.Պ. Վ. Մայերի և որդոց Ռէվելում ունեցած գործարանի պատրաստածը քիչ աւելի աժան է՝ շիշը 80 կուլ: Կարելի է ձեռք բերել եղբայրք Բլանդովների մօտ: Այս ներկը պէտք է պահել զով և մութ տեղ:

**Մազաղար.** Մազաղաթը ծառայում է կարագը փաթաթելու համար, որպէս զի տաքութեան, օգի, լոյսի ազգեցութեան տակ շուտով չփառաց, մանաւանդ երբ հարկաւոր է լինում հեռու տեղ ուզարկել:

Շունական մազաղաթը պէտք է լինի թափանցիկ, փափուկ և ոչ զիւրաբեկ: վատ մազաղաթը լինում է կոպիտ կամ չափաղանց բարակ, զիւրաբեկ: Եթէ ճմբթենք, կիշուի, ջրի մէջ կիավիկի և կպառառուի: այդ նշան է, որ նորա մէծ քանակութեամբ թթուներ կան: Գործածելուց առաջ մազաղաթը պէտք է լուանալ տաք և սառը ջրով, որպէս զի այդպիսով հեռացուի նորա միջից թթուի մնացորդները: Նախկին ժամանակներում մազաղաթի փոխարին կարագը փաթաթում էին քաթանով և մարլայով: Մազաղաթը ծախում է քաշով, գրուանքան 30—40 կուլ: կամ փութը 11-12 ռուբ: սա կամ քաթանի նման փաթաթած, ծրաբած է լինում (իւրաքանչիւր ծրաբը քաշում է 5 գրվ.) և կամ թերթ թերթ կտրաւած և դաստաներ ու օղմաներ կազմած: Առաջին աեսակն՝ այսինքն քաթանի նման ծրաբածն աւելի յարմար է և ձեռնառ, որովհետեւ

գրանից մարդ լիչպէս ուզենայ կարող է կարառել Ամենալաւը համարւում է Գօվարդի գործարանի մագաղաթը:

Կարագի պահելն ու աղելը, կարագ ստանալուց յետոյ պէտք է խնամք տանել և շթողնել բաց օգի տակ, լոյսի առաջ և տաք տեղ, հակառակ գէպքում կարագը կիչչանայ, կիորցնէ իւր ոսկեգոյն գեղին գոյնը և սպիտակ գոյն, ճրագուի համ կըստանայ, կ'կծուի, ծթրածի հոտ կառնի, իսկ այգալիսի կարագն անպէտք է գործածութեան համար: Քիչ քանակութեամբ կարագը կարճ ժամանակով պահելու համար պէտք է զնել նաև եռացրած և արա սառեցրած ջրի մէջ և տեղաւորել զոյ ու մուժ տեղ:

Եթէ հարկաւոր է լինում մէծ քանակութեամբ կարագը երկար ժամանակով պահել, անհրաժեշտ է նորա հետ որոշ քանակութեամբ աղ խառնել. չաղած կարագը երկար դիմանալ անկարող է. այգալիսի կարագը պէտք է աշխատել շատ շուտով գործ ածել: Աղը խառնուելով կարագի հետ աղատում է նրան մէջը մնացած թանից, դիմացիուն է գարճնում և որոշ համ է տալիս նրան: Աղը չի թողնում, որ կարագը փչանայ, նորա մէջ բակտերիաներ զարգանան:

Թէ ինչ քանակութեամբ աղ պէտք է խառնել կարագի հետ, այդ մասսամբ կախումն ունի գործածողի ճաշակից, մասսամբ էլ այն նպատակից, ինչի համար որ նշանակուած է: Սովորաբար ենթադրում են 2—5%:

Որպէս զի կարագի վերայ աղ աւելացնելն իւր ըոլոր նպատակներին ծառայէ, անհրաժեշտ, որ աղը հնար եղածին չափ մաքուր լինի, այսինքն ազատ գառնահամ, անմաքուր խառնուրդներից, գոյնը լինի ըոլորովին սպիտակ և վերջապէս ոչ շատ մանր և ոչ էլ չափազանց խոշոր մանրած լինի, այլ միջակ: Եթէ աղը շատ մանր է լինում, թէպէտ համահաւասար կերպով է խառնուում կարագի հետ, բայց թանը ըոլորովին չի դուրս գալիս: Խոշոր եղած գէպքում կանոնաւոր կերպով չի խառնուում կարագի հետ և ստացւում է ոչ միատեսակ զոյն ունեցող կարտգ: Այս տեսակէտից ամենալաւը համարւում է Նիւերութեագութիւնը աղը (Պէտերըութգում նտօլի և նմիդտի մօտ փութը մի ռութք), որ բաղկացած է փոքրիկ ըիրեղիկներից և քոլորովին աղատ է կողմնակի խառնուրդներից և դառն նիւթերից: Օքատակար է համարւում նաև բախմուածի աղը (Եղը. Բլանդովների մօտ՝ փութը 55 կոպ.), որ նոյնպէս մաքուր է և աղատ այլ խառնուրդներից:

Որպէս զի աղն օքատակար աղգեցութիւն ունենայ կարագի

վերայ, անհրաժեշտ է, որ վերջինս բաւական երկար ժամանակ (12 ժամից ոչ պակաս) լսե խռովնուած մնայ աղի հետ; Խոկուակն այս ժամանակամիջոց որոշելը զանազան պայմաններից կախումն ունի, առք եղանակներին փափակ կարագի մէջ ազն աւելի արագութեամբ է հալւում, քան ձմեռը պինդ կարագի մէջ. շատ թան պարունակու կարագն աւելի երկար ժամանակ պէտք է աղի աղգեցաւթեան առել մնայ, քան քիչ թան պարունակողը:

Աղած կարագը պէտք է պահել 10—120 բարեխառնութեան մէջ. ձմեռն ես նոյն պայմաններում պէտք է լինի և երբէք յեշեալ բարեխառնութիւնից ցած տեղ չպէտք է զնել կարագը:

**Կարագ նալելը.** Կան աեղեր, որ կարագը չեն աղում, զորտ փոխարէն հալում են: Առվորաբար եթէ կարագը կատարեալ կերպով հալած է, աւելի երկար կարող է դիմանալ, քան աղածը: Կարագ հալելը երկու նպատակ ունի: 1) զուրս ըերեւմիջեց ջուրը, պանրածինը, կաթնաշաքարը և առհասարակ բուլոր ոչ ճարպացին նիւթերը և 2) ստանալ մաքուր իւզ, որն երկար ժամանակ չի վերլուծում, չի փչանում: Հալած իւզ պատրաստելու ամենալու եղանակը հետեւեալն է. անագից, թիթեղից կամ ճենապակուց պատրաստած ամանը պէտք է լցնել կարագով, միայն ոչ բոլորովին լիքը և դնել մօտաւորապէս 400 լ. բարեխառնութիւն ուղեցող ջրով լիքը լցուած մի ուրիշ ամանի մէջ, միայն այնպէս, որ ջրի մակերեսոյթն աւելի բավար լինի, քան կարագինը: Կարագն անդադար պէտք է խառնել, երբ որ սկսում է հալուել, վերեսում յիշուած նիւթերը (պանրածինը և այլն) տակն են իջնում և այդ ժամանակ կարագի երեսին փափուր է գոյանում, որը հարկաւոր է զգուշութեամբ վերցնել: Վեց ժամ անցնելուց յետոյ կարագը գառնում է սոկեգոյն-գեղին, թափանցիկ մի զանգուած: Շատ չպէտք է թոզնել, որ իւզը պաղելով պնդանայ՝ հաստատուն մարմին դառնայ. հենց որ սկսում է քիչ թանձրանալ, զգուշութեամբ պէտք է զատարկել ուրիշ փայտեայ կամ կաւեայ ամանների մէջ. միայն շատ զգուշ պէտք է լինել, որ ամանի տակ եղած աղսեղութիւնը, թանը շխառնուի հալած, մաքուր իւզի հետ և ցցուի նոր ամանի մէջ: աւելի լաւ է այսպիսի գեպում քաթանով քամել:

Կան հալելուց կարագը կարցնում է իւր սկզբնական քաշից 17—20 %, այսինքն 100 մատից 17—20 մաս: Այս կերպ ստացուած հալած իւզը, որ պարունակում է իւր մէջ 98-99,5% մաքուր ճարպ, շատ երկար կարող է դիմանալ, մի տարուց աւելի,

մանաւանդ եթէ հալելիս չի ալրուել: Խւզն աւելի յաճախ այրում է կըակի վերայ հալելիս: Եթէ աղ աւ ելացուի հալած իւղի վերայ, աւելի գիմացկուն կըառնայ:

Կարից դուրս եկած կարագի տանակուրիւնը. Ամէնքի համար հետաքրքիր է իմանալ, թէ իւրաքանչիւր վեդրօ կամ փութ կաթից որքան կարագ է ստացւում: Ամենից աւելի յարմար է սրոշել, թէ քանի՞ գրուանքայ կաթից մի գրուանքայ կարագ է ստացւում կամ թէ չէ 100 գրուանքայ կաթից քանի՞ գրուանքայ կարագ է դուրս գալիս: Այդ նշանակում է, որ մի գրուանքայ կամ փութ կարագ ստանալու համար հարկաւոր է 25 գրվ. կամ փութ կաթ: Միենայնը կարելի է արտայայտել նաև այսպէս «արդիւնքը 25 է», այդ նշանակում է, որ մի գրուանքայ կամ փութ կարագ ստանալու համար հարկաւոր է 25 գրվ. կամ փութ կաթ: Միենայնը կարելի է արտայայտել նաև այսպէս «արդիւնքը = 40/0»: Այդ նշանակում է թէ 100 մաս կաթից դուրս է գալիս 4 մաս կարագ: Կաթից ստացուած արդիւնքն այս եղանակով որոշելը շատ յարմար է:

Միենոյն անտեսութեան մէջ կաթից ստացուած արդիւնքը կարող է առարեր լինել այն պատճառներից, ինչ պատճառներից որ տարբեր է լինում կաթի մէջ ճարպի քանակութիւնը (տես այն պայմանները, որոնք ազդեցութիւն են ունենում կաթի քաղաքութեան վերայ): Ուուսաստանում տարեկան միջին արդիւնքը նվազցի եղանակով ուր քաշելու գէպքում հաւասար է 25-ի կամ 40/0-ի կամ մի վեցը կաթից 14/3 գրվ. կարագ է ստացւում, իսկ սեպարատօր գործածած ժամանակ՝ 23½ կամ 4,250/0 կամ 12/7 գրվ. կարագ ստացւում է մի վեցը կաթից: Տարուայ ընթացքում արդիւնքի մէջ խիստ մեծ տարբերութիւններ են տեղի ունենում. այսպէս օրինակ, մայիսին և յունիսին տնասուններն արօտներում արածելով, կամ փետրուարին ու մարտին շատ նոր ծնած կալերի պատճառով կաթից ստացուած կարագի քանակութիւնը շատ կընկնի: 28—30 գրվ. կաթից հազիւ մի գրվ. կարագ ստացուի (3,33—3,570/0), տչնանը, այսինքն հոկտեմբերին և նոյեմբերին, երբ կոլերի կերը չոր է լինում, կաթը խիստ խղոս է լինում և 16—20 գրվ. կաթից ստացւում է մի գրվ. (կարագ 5—6,250/0): Ամառը երեկոյեան ստացուած կաթն (արօտներում արածելով) աւելի քիչ կարագ է տալիս, քոն առուօտուանը, որ հաւաքւում է կարճ գիշերուայ ընթացքում, երբ կենդանին առանց ջրի և խոտի է մնում:

Կարագի արամելը. Կարագի արամաւառ, պակասաւար լինելու պատճառները շատ են: անտառունների վատ կերը, հիւանդու, արամաւառ կաթը, անմաքրութիւնը և այլն:

Որ կերը կարագի բազագրութեան և յատկութեան վերայ մեծ ազգեցութիւնն է ունենում և հենց կարագի համից, պընդութեան աստիճանից և գոյնից մարդ կարող է խօսնալ կերի տեսակը, գրանում ոչ մի կամած շրայ: Յորբոսնած, վշացած կոմ անձրեւ տակ երկար մնացած կերը կարող է շատ վատ ազդել կարագի վերայ: Յանախ նոյն խոկ ստիաւ քանակութեամբ վշացած կերն անգամ անպէտք է զարձնում կարագը գործածութեան համար: Երբեմն կարագի յատկութեան վերայ մեծ ազգեցութիւնն է ունենում նաև անձրեւշատ տմառը, որովհետեւ նախ որ այսպիսի պարագաներում կերը թիստ ջրալի է լինում, որը որոշ չափով իւր ոչ բարերար ազգեցութիւնն է ունենում և երկրորդ, որ այսպիսի ժամանակ խոաք և դարձանը խռնաւ հաւաքելալ, վերջիններիս մէջ բակտերիաներ կառոշանան. այդպիսի խոտ անասուններն ուտելով կվարակեն կաթը զանազան սաղմեցալ:

Առաջ ենք ըերում այստեղ կարագի պակասուոր տեսակները և նրանց առաջանալու պատճառները:

Ճշգակալաւած կարագ (մոմռած իւղ)՝ Առ ճրագուի և մի տեսակ անհաճոյ համ է ունենում, քանի մ, մնում է լիզու վերայ: Առա առաջանալու պատճառներն են անասունների բակի և կաթնատան անմաքրութիւնը, վաս խմնչքը և վշացած կերը: Արգեսզի այդպիսի պակասուոր կարագ չափուի, հարկաւոր է, որ կերը, խմելեքը, կաթնատարնը և ամանները բոլորովին մաքուր լինեն:

Փօրուաղ կարագ. Այս տեսակ կարագ է ստացւում այն ժամանակ, երբ հարը տեղը չի լինում, այսինքն երբ կատարելապէս չէ հարած և կամ խնոցուց դուրս բերելուց յետոյ կարագը չափազանց սառեցրած է: Առաղիսի կարագի միջից գժուար է թանը կանոնաւորապէս զուրս բերել, նու անկանոն կերպով է լցւում, տեղաւորւում տակառների և այլ ամանների մէջ, որի պատճառով և չուտով կորցնում է իւր բու յատկութիւնները:

Մարմարինակերպ կարագ. Երբեմն հարկաւոր է լինում մի քանի օր շարունակ կարագ հաւաքել և ամաններում տեղաւորել այդ կերպ տարբեր ժամանակներում հաւաքած կարագը տարբեր գոյններ է ունենում. շուտ պատրաստած կարագի երեսի դոյնը օդի ազգեցութեան տակ փոխուում է. Եթէ ազդ կերպ մաս մաս հաւաքած կարագի կարուները տառնց նախապէս խռնելու լցնենք միենայն ամանի մէջ, վերջը կստացուի բծաւոր, շերտաւոր կամ մարմարինակերպ կարագ: Այս պակասութիւններ կարագն ազատ պահելու համար, նախքան ամանի մէջ լցնելը պէտք է իւրաքանչիւր տեսակից քիչ քէշ վերցնել և գնել քամիչը կամ ճմլչը վերայ ու մի քանի անգամ ճգմել ճմլել, որպէս զի լաւ խռնուի:

Դառը կարագ. Կարագը դառը կարող է լինել այն ժամանակ, երբ անասունների կերը մէջ դառը խոտ է լինում և կամ երբ կաթն անմաքուր է լինում: Վերջին դէպքում պակասու-

թեան առաջ կարելի է առնել մաքսութեամբ: Դառը խոտերի հետ առաւել դժուար է կռիւ մղել: Այս գեպառմ զառնութեան առաջ բաւականաչափ կարելի է առնել: Եթէ ոերբ մշտապես խառնելով տաքացնենք լայնարերան ամսնի մէջ և ապա որոշ բարձրաթիւնից մի քանի անգամ թափենք մի ուրիշ ամսնի մէջ ու այդպիսով սառեցնենք: ահա այս միջոցով տաք սերի միջից թռչող գառն նիւթերը կցնգեն:

Կաթի գառնութեան պատճառ կարող են լինել առանձին սունկեր, որոնց դէմ կռիւ մղելու համար, հէնց որ կաթին և սերը սկսն գառնանալ, հարկաւոր է խոկոյն կովերի կամպնած տեղերի աղըն ամենայն օր հաւաքել և յետոյ կարբոլաթթւուտ ցանել, իսկ սահնքն երկու անգամ լուսնալ նախ գոլ և ապա մէջը կարբոլաթթւուտ լուծած ջրով: Երեք օրից յետոյ կոթի և սերի գառը համը բոլորավին կովերջանայ և սերից կարելի կլինի երկն պատրաստել հիանալի կարագ:

Դառը կաթի առաջ կարելի է առնել նաև սունկերը սօղի լուծուածքով (100 մաս ջրի մէջ 2 մաս սօդա լուծել), աղբահիւթի, մէջի օլուղները կրեօլինի ՅՈ լուծուածքով լուսնալով, իսկ պառկների անցքերը սրոկելով ախտահանել բորտկաթթւուտի (борբալ կուլատա) ՅՈ լուծուածքով:

Երբեմն հին կթուող կովերի մի քանի պառկները գառնաղի կաթ են տալիս Այզպիսի գէպբում հիւանդ կաթը պէտք է առանձին պահել և շխառնել ու ողջ կաթի հետ:

Սպիտակ պինդ կարագ սաացւում է յաճախ ցած, ճահճային կամ անտառային (կաղնու անտառ) արօններում և մարդագետիններում արածող կովերի կաթից: Այզպիսի կարագը շատ թանձր և սպիտակ է լինում, թանը միջից դժուարութեամբ է քամեռում, անհամ է լինում և ճրագուի համ է ունենում: Պինդ կարագ է սաացւում նաև այն ժամանակ, երբ կերը համացեա ամընջապէս յարդից է բաղկացած լինում: Երբեմն այս պակասութիւնը թարմ կարագի մէջ այնքան էլ նկատելի չի լինում, բայց մի քանի շաբաթ անցնելուց յետոյ ճրագուի համ է սաանում: Այս պակասութիւնն ուղղելու համար անհրաժեշտ է արօնը փոխել կոմ անտառներում եղած արօնները մաքրել վնասակար բոյսերից, ճահճային տեղերը չորացնել, իսկ ձմեռ ժամանակ յարդի վերայ աւելացնել նաև ճակնդեղ (տակ), հում կարթոֆիլ, նուս ալիւր, թեփ, կոպտոն և այլն:

Այլ եւ այլ նու ու համ ունեցող կարագ. Այս կերպ այլայլուած կարագ սաացւում է այն ժամանակ, երբ կաթնատոն մօտ եղած առակից, անձրևաջորդ լեքը փոսից ներս է մանոււմ կաթնատուն անմաքուր, նեխուած օգ, կամ երբ միենայն տակառը, ամսնը գործադրուում է ինչպէս կաթնարանում, նոյնպէս և այնազդից թանը և այլ հեղուկ նիւթեր մի այլ տեղ, օրինակ խոզնոց փոխազքերու համար և վերջապէս, երբ կարագը թթու կաղամբի, փարունգի, ձկների և այլ սոյնանման նիւթերի հետ միտուն է պահւում: